

Տեսակիւն

Թաւշեայ Յեղափոխութեան Ոչ-Թաւշեայ Մարտահրաւերները



Երեկ ուշադրութիւնս գրաւեց ամերիկեան պահպանողական թերթ՝ «Ուաշինկթըն Թայմզ»-ի տեսակէտ բաժնի տակ հրապարակուած մէկ վերլուծական յօդուածը, որուն հեղինակն է լրագրող Լ. Թոտ Ուուտը:

Յօդուածին վերնագիրն է «Քաղաքական Վրիժակռիւներ Հայաստանի մէջ», որուն ընդհանուր տրամաբանութիւնը բնաւ ալ դրական չէր Հայաստանի մէջ տեղի ունեցած յեղափոխութեան մասին: Անոր միտք բանին հիմնուած էր հետեւեալ բանին վրայ «ՀՀ մէջ իրականացուող քաղաքական վրիժակռիւնը փխրուն եւ խոցելի կը դարձնէ օրէնքի իշխանութիւնը»: Բաւականին վտանգաւոր վերլուծում:

Քննարկելիքս այստեղ սիրելի ընթերցող նշեալ յօդուածին բովանդակութեան մանրամասնութիւնը չէ, որքան անոր ոգին, որ շատ խանդավառ չէ Հայաստանի մէջ կատարուածով:

Սկսելու համար ըսեմ, որ մտածեցի, որ ուրկէ՛ ուր այս թերթը Հայաստանի մասին յօդուած ուզած է հրապարակել: Մինչ այդ սկսայ նկատել ընկերային համացանցի վրայ անոր անխնայ տարածումը Հայաստանի թէ՛ յեղափոխականներուն կողմէ եւ թէ՛ ոչ-յեղափոխականներուն (հակայեղափոխական դրուածքը չեմ սիրեր): Ոչ-յեղափոխականներուն նպատակը յստակ է անշուշտ, իսկ յեղափոխականները, երեւի տեղւոյն մշակոյթին վրայ հիմնուած թերեւս, թերթը կ'ամբաստանէին վճարովի փրփոկական ընելու մեղադրանքով, որ ըստ իսկ մակերեսային է, որովհետեւ նման թերթեր, յանուն իրենց արհեստավարժ վարկին, զգոյշ են նման անբարոյականութիւն մը գործելու: Նմանօրինակ թերթեր անկախ ամերիկեան ներքին քաղաքականութեան մէջ իրենց ունեցած հակակարծիք հրապարակումներուն, զարմանալիօրէն միասնական են ինչ կը վերաբերի ամերիկեան արտաքին քաղաքականութեան արտացոլումին...: Հետեւաբար աս յօդուածին այս ժամանակով հրապարակուիլը, ըստ իս, Ամերիկայի վարչակարգին Հայաստանի նոր իշխանութեան հանդէպ ունեցած դիրքորոշումը կ'արտացոլացնէ կերպով մը...:

Անցնիմ նիւթիս: Հայաստանի մէջ կատարուած այսպէս կոչուած թաւշեայ յեղափոխութիւնը հակառակ իր ունեցած ժողովրդականութեան, որուն պատճառները շատ են, ունի լուրջ մարտահրաւերներ: Նախ այն պատճառով, որ նման ժողովրդականութիւն շատ յաճախ խաբուսիկ է եւ ժամանակաւոր, որովհետեւ միեւնոյն ժողովուրդը կրնայ նաեւ յուսախաբութիւն ապրիլ եթէ նկատի ունենանք նման յեղափոխութիւններու օգտագործած փոփոխիչ մարդիկը չափազանցուած խոստումները: Ոմանք Օգոստոս 17ի նշանաւոր հանրահաւաքի ներկայութեան թիւը չափանիշ որդեգրած են: Մինչ ուրիշներ կը պնդեն, որ ոեւէ վարչակարգ, նոյնիսկ հակասական, եւ նոյն երկրին մէջ, ունի իր 100,000 ներկաներու

էջ 02

ՍԵՄԿ ՅԱՎՈՐԵԱՆ

Լիբանանեան Լուրեր

Հարիրի Կ'արձագանգէ Կառավարութեան Կազմաւորման Երկարաձգման Կապակցութեամբ Յարուցուած Քննադատութիւններուն



Վարչապետի պաշտօնակատար Սաատ Հարիրի Երեքշաբթի արձագանգեց այն յերիւրածոյ բամբասանքներուն, ըստ որոնց՝ մեծ հաւանականութիւն կայ վարչապետի պաշտօնակազմութեան, եթէ վերջիս չկարենայ շուտով ի կատար ածել կառավարութեան կազմաւորումը: Վարչապետը ընդգծեց, որ ոչինչով կ'երաշխաւորուի կառավարութեան կազմաւորման ժամկետը՝ բացի սահմանադրութենէն: Այս մասին վարչապետը ըսաւ իր նստավայրին մէջ Մուսաքապալ պլոքի հետ հանդիպումէն ետք:

Հարիրի դիտել տուաւ, որ կառավարութեան կազմաւորման երկարաձգման կարեւորագոյն մեխը կարգ մը կուսակցութեանց պահանջած ներկայացուցչութեան բաժնեմասն է նախարարաց նոր խորհուրդին մէջ: Ան աւելցուց, որ ինքը եւ նախագահ Միշել Աունը Երեքշաբթի պայմանաւորուեցան հանդիպիլ, երբ Հարիրի զանազան կողմերու հետ յաւելեալ քննարկումներ ունենայ նախարարական պաշտօնատուութեան շուրջ:

էջ 08

Հայրենի Լուրեր

Արմէն Սարգսեան Եւ Արա Պապլոյեան Քննարկած Են Երկրին Մէջ Տիրող Ներքաղաքական Իրավիճակը



Օգոստոս 28-ին կայացած է Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի եւ Ազգային ժողովի նախագահ Արա Պապլոյեանի հանդիպումը: Ինչպէս կը փոխանցէ «Արմէնփրես»-ը, ՀՀ Ազգային ժողովի լրատուութեան եւ հանրութեան հետ կապերու վարչու-թենէն կը տեղեկացնեն, որ հանդիպումի նախաձեռնութեան առաջարկով աւելի կանուխ հանդէս եկած էր Ազգային ժողովի նախագահը՝ երկրի ներքաղաքական դրութեան մասին յայտարարութեամբ:

Խորհրդարանի ղեկավարը Հանրապետութեան նախագահին տեղեկացուցած է, թէ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ նախօրէին կայացած հանդիպումին կողմերը արձանագրած են, որ խնդիրներու լուծման

էջ 08

Տեսակին Թաւշեայ Յեղափոխութեան Ոչ-Թաւշեայ Մարտահրաւերները

Էջ 01 >>

թիւը, որոնք պատրաստ են հրապարակ ողողելու տուեալ օրուայ իշխանութեան կազմակերպած հանրահաւաքի մը պարագային:

Կը մնայ ի՞նչ: Կը մնայ վերլուծել ներկայ իրավիճակը ինչ կը վերաբերի վարչակարգին ունեցած արտաքին նեցուկին, որ նոյնքան կարելոր է գոյատեւելու համար, որքան իր ունեցած ներքին ժողովրդականութիւնը, եթէ ընդունինք անոր կայունութիւնը:

Սկսինք:

Մերքելի Այցելութիւնը

Մերքելի այցելութիւնը պատահեցաւ շատ կարելոր հանգրուանի մը, ուր ըստ երեւոյթին Գերմանիա իր ազդեցութիւնը եւ քաղաքականութիւնը ի գործ կը դնէ կամ կը փորձարկէ Կովկասի մէջ: Մինչեւ այս պահս յստակ չէ Մերքելի այցելութենէն Յայաստանի քաղաք քաղաքական օգուտը, նամանաւանդ որ ոչ ոք գիտէ, թէ Գերմանիա, որպէս իր կովկասեան գործընկեր Ազրպէյճանը պիտի ընտրէ, թէ Յայաստանը...: Աւելին, հակառակ յոյսերու, գերմանական նիւթական լուրջ օժանդակութեան մը նշոյլը չկայ տակաւին, որուն այնքան պետք ունի Յայաստանի նոր վարչակարգը: Բան մը, որ Եւրոպայի ոչ այնքան տաք քաղաքականութեան արտացոլացումը կարելի է համարուիլ Յայաստանի նկատմամբ: Իսկ Մերքելի Ծիծեռնակաբերդ այցելութիւնը բնաւ երբեք պետք չէ շփոթուի Յայաստանի հանդէպ հանդէպ նեցուկով, ինչպէս կարգ մը պարզամիտներ կը կարծեն: Գերմանիա Յայոց Յեղասպանութիւնը ճանչցած էր Յայաստանի նախկին վարչակարգի օրերուն եւ այդ մէկը կը վերաբերի աւելի Գերմանիոյ իշխող ուժերուն ընտրական ներքին քաղաքականութեան ու պատմական մէկ պահուն թուրքիոյ ուղարկուած մէկ տոմսակին, քան Յայաստանի հանդէպ ցուցաբերուած նեցուկի:

Իրանի դէմ Ամերիկեան Պատժամիջոցները

Իրան կը համարուի Յայաստանի սահմանակից բարեկամ պետութիւն եւ տնտեսական գործընկեր, հակառակ տնտեսական գործառնութեան համեմատաբար չնչին գումարին: Այսօր սակայն տակաւին յայտնի չէ, որ ամերիկեան որքան պիտի հանդուրժէ այդ կապը իր պարտադրած էմպարկոյի ծիրէն ներս: Անմիջապէս նշեմ, որ այդ հանդուրժողականութիւնը անմիջականօրէն անշուշտ կապուած պիտի ըլլայ ամերիկայի ցուցաբերելիք նեցուկին՝ հանդէպ Յայաստանի ներկայ իշխանութեան:

Յայաստանի մէջ Ռուսական Բալաշնիքովի Արտադրութեան Յամաձայնագիրը

Վերջերս տեղի ունեցաւ ռուսական քալաշնիքով Յայաստանի մէջ

արտադրուելու համաձայնագրի մը ստորագրութիւնը պատկան կողմերու միջեւ: Նախ ըսենք, որ նման համաձայնութիւն մը օրերու արդիւնք չի կրնար ըլլալ այլ երկարաժամկետ բանակցութիւններու, որոնք հաւանաբար սկսած էին շատ ժամանակ առաջ: Երկրորդ, մեր ձեռքին մէջ ունեցածը տակաւին արտադրութեան համաձայնագիրն է եւ ոչ արտադրութիւնը կամ անոր տարողութիւնը, որ բնականաբար կը կարօտի ռուսական իշխանութեան բարեացակամ մօտեցումին հանդէպ Յայաստանի ներկայ իշխանութեան:

Հիմնուելով վերոյիշեալներուն վրայ կարելի է ամեն ինչ ամփոփել ու հիմնուիլ հետեւեալ հարցերու պատասխանին վրայ.

Ա. Գերմանիան, Արցախի հիմնախնդիրն ալ նկատի առած, քաղաքական եւ նիւթաբարոյական նեցուկ պիտի ցուցաբերէ՞ Յայաստանի նոր իշխանութեան:

Բ. Հակառակ իր իսկ պարտադրած պատժամիջոցներուն, Ամերիկեան պիտի աչք խփէ՞ Յայաստանի եւ Իրանի մէջ առկայ տնտեսական գործակցութեան եւ փոխանակումներուն:

Գ. Ռուսիան պիտի արտօնէ՞ զինարտադրութեան համար կնքուած համաձայնագրին անմիջական գործադրութիւնը:

Եթէ այս հարցադրումներուն պատասխանները դրական դուրս քան՝ շատ բարի: Սակայն եթէ ժխտական ըլլան ապա Յայաստանի իշխանութիւնը լուրջ մարտահրաւերներու առջեւ է ի բացակայութիւն արտաքին նեցուկի, բան մը, որ պիտի հաստատէ թէ այնտեղ իրագործուածը մոմէնթըմի արդիւնք էր, ինչ կը վերաբերի նախկին վարչակարգին դէմ եղած դժգոհութիւններուն եւ պատահականութեան ընձեռած յաջողութիւն է, որուն ապագան մութ կրնայ ըլլալ դժբախտաբար:


Կը մնայ փորձութեամբ լի Սեպտեմբերը: Ըստ ծրագրուածին, Սեպտեմբերին պիտի կայանայ Երեւանի քաղաքապետական ընտրութիւնները, որուն արդիւնքէն շատ բան կախուած է: Անոր քուէտուփերուն արդիւնքն է, որ պիտի հաստատէ իրական ժողովրդականութիւնը ու անոր ճշգրիտ ծաւալը:

Յառաջիկայ Սեպտեմբերին Վարչապետ Փաշինեանի առաջադրած թեկնածուն, իշխանութեան հաշույն եթէ չախջախիչ մեծամասնութեամբ չընտրուի ապա այդ մէկը մեծ պարտութիւն պիտի համարուի իշխանութեան, որուն ըստ երեւոյթին միակ ապաւենը իր յայտարարած ժողովրդականութիւնն է հանդէպ իր գոյութեան: Հակառակ պարագային գոյութեան ապահովումը պիտի կարօտի լուրջ միջոցառումներու, որ ոչ մէկուն ձեռնտու է:

Օրերը յոյս են փորձութիւններով եւ մարտահրաւերներով: Ապագան ալ գայն սպասողին համար մօտիկ է:

Սպասենք եւ տեսնենք: Մինչ այդ մեր Յայրենիքին մաղթենք կայունութիւն եւ անխախտելի ապահովութիւն ու... տրամաբանութիւն:

ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ



Պատմութեան Մէջ Այսօր

Ստեփան Թարեան (Թարխարարեան)

Ստեփան Թարեան (Թարխարարեան) (17 (29) Օգոստոս 1899, Թիֆլիս - 20 Մայիս 1954, Երեւան), հայ բեմանկարիչ, քանդակագործ: ՀԽՍՀ արուեստի վաստակաւոր գործիչ (1945):

Եղած է ՀԽՍՀ վաստակաւոր արուեստագէտ Մայրանուշ Պարոնիկեանի ամուսինը:

Մեծցած է Թիֆլիսի մէջ: Աւարտած է Թիֆլիսի գեղարուեստի ուսումնարանը (1918), Լենինկըրատի գեղարուեստի ակադեմիոյ քանդակագործութեան բաժինը (1927): 1927թուականին տեղափոխուած է Երեւան:

1920 թուականին նկարած է Անիի Տիգրան Յոնենցի եկեղեցւոյ որմնանկարները:

Առաջին ձեւաւորումը եղած է «Խաթաբալա» ներկայացումը 1927 թուականին Գաբրիէլ Սունդուկեանի անուան ակադեմիական թատրոնին մէջ: Աշխատած է Պատանի հանդիսատեսի թատրոնին մէջ, ինչպէս նաեւ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր), Արտաշատի եւ Ալավերդիի թատրոններուն մէջ:

«Հայֆիլմ»-ի մէջ ձեւաւորած է «Կիկոս» (1933), «Գիքոր» (1934) ֆիլմերը:

Թատերական ձեւաւորումներ

«Խաթաբալա» (1927, 1940, 1945), «Պեպօ» (1929, 1948), «Զանդած Օճախ» (1938), «Նափուլէն Կորկոտեան» (1934), «Ցասում» (1930), «Արշալոյսին» (1937), «Հրացանաւոր Մարդը» (1938)

Քանդակներ

Հեղինակն է Վանօ Խոճաբեկեանի (1930), դերասանուհի Մայրանուշ Պարոնիկեանի (1945) դիմաքանդակներուն (երկուքն ալ՝ մարմար, ՀԱՊ), «Սպասում» քանդակին (1930-ական, Երեւանի մէջ տեղադրուած է 2000-ին):

Սոֆիա Աճառեանի Յուշերը

ԱՆՈՒՇ ԹՐՈՒՄՆՑ



Այս տարեկիցքին՝ յունուար ամսուն, երբ հարցազրոյց մը հրատարակեցինք մեծ լեզուաբան ու բանասեր Յրաչեայ Աճառեանի անուանակից թռռան՝ Յրաչեայ Աճառեանին հետ, անոր Պոլիս այցեն առաջ, ան հարցազրոյցին ընթացքին յայտնեց, որ տպագրութեան յանձնած է իր մեծ մօր՝ Սոֆիա Աճառեանի յուշերը Յրաչեայ Աճառեանի մասին: Մեր զրուցակիցը նկատած էր նաեւ, որ իր մեծ մօրը բաժին ինկած է Աճառեանի կեանքին ամենէն դժուար շրջանը, բայց ան տոկացած է եւ նոյնիսկ կրցած է յուշերուն գիրքը շարադրել:

Ահաւասիկ, ընթերցողներու սեղանին է Սոֆիա Աճառեանի «Իմ յուշերը Աճառեանի մասին» գիրքը, հրատարակուած «Ասողիկ» հրատարակչութեան, 286 էջոց բացառիկ յուշապատում մը, որ մէկ շունչով կ'ընթերցուի եւ նորանոր մանրամասնութիւններ ի յայտ կը բերէ մեծն Աճառեանի կեանքէն:

Չարմանակի ճշգրտութեամբ, մանրամասնօրէն, սիրով եւ քաջութեամբ, Սոֆիա Աճառեան գրած է իրենց կեանքին պատմութիւնը, եւ ահաւասիկ, տարիներ ետք, երբ բազում գիրքեր, յուշեր, վկայութիւններ հրատարակուած են մեծ լեզուաբանին, անոր կեանքին եւ ընտանիքին մասին, փաստօրէն կան գրութիւններ, որոնք տակաւին մեծ հետաքրքրութեամբ կ'ընթերցուին եւ կը կլանեն ընթերցողը՝ կրկին տանելով այն օրերը, երբ ապրած, տառապած, հալածուած եւ իր կոթողային անմահ գործերը ստեղծած է Յրաչեայ Աճառեան:

Սոֆիա Աճառեանի յուշերը ոչ միայն անոնց համատեղ կեանքին մասին են, այլ այն անձերուն, որոնք եղած են Աճառեաններուն բարեկամները, նաեւ՝ թշնամիներուն եւ հայ մեծ գիտնականին ճակատագիրը խեղողներուն:

Իր կեանքի օրերուն Յրաչեայ Աճառեան նոյնպէս յուշեր կազմած է, ան առողջութեան կորուստին պատճառով չէ կրցած այդ յուշերը անձամբ գրի առնել եւ թելադրած է իր դստեր եւ ուսանողներուն: Յետագային, գիտնականին յուշերը լոյս տեսած են «Կեանքիս յուշերէն» խորագրով: Սոֆիկ Աճառեանի յուշերուն մէջ կը կարդանք. «Իմ յուշերը կարծես Աճառեանի յուշերուն անքակտելի բաղկացուցիչ մասն ու շարունակութիւնը կը կազմեն: Աճառեանը չէր սիրեր խօսիլ իր մասին. իմ յուշերուս մէջ սակայն, ես կը խօսիմ Աճառեանին, անոր շրջապատին, հին ու նոր բարեկամներուն հետ անոր հանդիպումներուն, հետաքրքրական խօսակցութիւններուն ու տեսակցութիւններուն, ուսանողներուն եւ ասպիրանտներուն նկատմամբ անոր քաջալերական վերաբերմունքին մասին:

«Երեխայի պարզութեամբ ու անմեղութեամբ այդ մարդուն կեանքին մէջ թունաւորող երեւոյթ-

ները, դժբախտաբար, անպակաս եղան: Անհատի պաշտամունքին մռայլ ժամանակաշրջանին ան եւս տուժեց: Իմ յուշերուն մէջ տեղ գտած են Աճառեանի այն ժամանակուան կրած տառապանքներն ու դառնութիւնները, բանտին մէջ ունեցած մեր հանդիպումներուն նկարագրութիւնը, բախտակից ու բանտակից իր ընկերներուն պատմածներն ու յիշողութիւնները:

«Ես ջանք գործադրած եմ բացայայտելու Աճառեանի բնաւորութեան, խառնուածքին իւրայատուկ, երբեմն նոյնիսկ տարօրինակ թուացող կողմերը: Ուշադրութեան արժանի եւ ուսանելի շատ բան ունի Աճառեանի աշխատասիրութիւնը, հետեւողականութիւնը անոր աշխատանքին գիտականօրէն կազմակերպուած համակարգը, որով ան կրցած է այնքան բեղմնաւոր ըլլալ», իր յուշերուն մասին այսպիսի նախաբան մը գրած է Սոֆիկ Աճառեան:

Սոֆիան մեծ լեզուաբանին կողմէ կոչուած է Սոֆիկ: Ան, ինչպէս ծանօթ է, եղած է Յրաչեայ Աճառեանի երկրորդ կինը, եւ Աճառեանը՝ անոր երկրորդ ամուսինն էր: Մինչ Սոֆիային հետ ամուսնանալը, Յրաչեայ Աճառեան կորսնցուցած էր իր սիրելի կինը՝ Արուսեակը. վերջինս մահացած էր՝ խոր վշտի մէջ ձգելով գիտնականը:

1923 թուականին, երբ Երեւանի մէջ կը գործէր Պետական համալսարանը, պոլսահայ Աճառեանը այդ ժամանակ կը պաշտօնավարէր Թաւրիզ: Ան Թաւրիզէն կը դիմէ Յայաստանի ղեկավարներէն Ալեքսանդր Միասնիկեանին՝ «Ինծի պետքուն համար կա՞յ գործ աշխատելու» հարցնելով եւ անմիջապէս կը հրաւիրուի Յայաստան, որպէսզի դասաւանդէ Պետական համալսարանին մէջ: Աճառեան Յայաստան եկած է Արուսեակին հետ (որուն ան ծանօթացած էր Շուշիի մէջ ուսուցչութեան տարիներուն):

Երկու տարի ետք, Երեւանի մէջ, Արուսեակը կը մահանայ: Աճառեանի նամակներուն մէջ կայ մէկը, որ հասցեագրուած է կնոջ Իրան բնակող հարազատներէն մէկուն. «Եւ այսպէս, խեղճ Արուսեակս մահացաւ՝ իւրայիններէն հեռու, նոյնիսկ չարժանացաւ անոնց կարեկցանքին: Գիշերցերէկ անդադար գայն կը յիշեմ, կ'ողբամ եւ կը ցաւիմ: Այսօր յատկապէս շատ դառն յուշերու մէջ էի, կը վախնամ, որ խելագարիմ: Տունը բոլորովին առանձին եմ, մէկը չկայ, եթէ արկած մը պատահի ինծի, փողոցի շան վիճակէն ալ վատ կ'ըլլայ դրութիւնս»:

Այդ ծանր հոգեվիճակը կը շարունակուի երկար ժամանակ, մինչեւ որ Աճառեան կը հանդիպի Սոֆիային: Անոնց տարիքային տարբերութիւնը բաւական ակնառու էր, սակայն այդ մէկը չի խանգարէր Աճառեանը Սոֆիային ամուսնութեան առաջարկ ընելու:

Սոֆիա Յրաչեայ Աճառեանի մասին յուշերուն մէջ կը պատմէ, թէ ինչպէս ծանօթացած է մեծ գիտնականին: Ծանօթացած է 1935 թուականին, երբ ինք՝ Սոֆիան, կ'ուսանէր Երեւանի անասնաբուժական-անասնաբուժական համալսարանին մէջ եւ յունուարի կիսամեակային առաջին իսկ քննութենէն ձախողած էր իր ընկերուհիին հետ: Ընկերուհին կը գիտնայ, որ այդ առարկային դասախօսը Աճառեանի մօտ ընկերն է, իսկ ընկերուհին ծանօթ էր Աճառեանին եւ կ'առաջարկէ միասին այցելել Աճառեանին եւ խնդրել միջնորդել, որպէսզի իրենք կրկին յանձնեն այդ քննութիւնը:

«Ժամանակ»/ Պոլիս

Շար. 1

«ՅՅ-ի Մէջ Իրականացուող Վրէժը Փխրուն Եւ Խոցելի Կը Դարձնէ Օրէնքի Իշխանութիւնը». «Washington Times»-ի Անդրադարձը

ՀՐԱՆԴ ՍԱՐԱՖԵԱՆ



«Washington Times» հանդէս եկած է յօդուածով՝ անդրադառնալով Յայաստանի մէջ տեղի ունեցած իշխանափոխութենէն ետք ստեղծուած իրավիճակին՝ խօսելով ՅՅ վարչապետ Նիկոլ Փաշինեանի վարած քաղաքականութեան, ինչպէս նաեւ ՅՅ երկրորդ նախագահ Ռոպերթ Զոհարեանի դէմ յարուցուած քրեական գործին մասին: Ամերիկեան հանրայայտ լրատուամիջոցը կ'ահագանգէ, որ Յայաստանի մէջ իրականացուող վրէժը անկասկած կը փլուզէ արդարադատութեան հիմքերը:

«ԶոնՖուսիոս ըսած է. «Վրէժխնդրութենէ առաջ երկու գերեզման փորէ՛»: Ն. Փաշինեանն ու իր դատաւորները պիտի յիշեն այս ճշմարտութիւնը:

Եթէ Յայաստանը իրապէս շահագրգռուած է Արեւմտեան քաղաքականութեամբ եւ գործընկերութեամբ, ապա պետք է հաւատարիմ մնայ եւ յարգէ մարդու իրաւունքներու միջազգային կարգերն ու իրաւական պայմանագիրները, այդ կարգին՝ Եւրախորհուրդի կողմէ 2008-ին խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքներու ճանաչումը:

ԱՄՆ խորապէս շահագրգիռ է Կովկասեան տարածաշրջանի կայունութեամբ: Սակայն Յայաստանի մէջ մարդու իրաւունքներու եւ առհասարակ իրաւական կարգերու խախտումները կրնան վտանգել երկրի կայունութիւնը, ինչը հաւանական է, որ ըլլայ Ռոպերթ Զոհարեանի պարագային:

Տրամաբանական է, որ Փաշինեանը, ըլլալով քաղաքական նորեկ, պիտի չհատէ որոշ կարմիր գիծեր, այդ կարգին՝ վրէժ իրականացնել, ինչ որ անկայտօրէն կրնայ սասանել Յայաստանի մէջ այնքան փխրուն եւ խոցելի օրէնքի իշխանութիւնը:

Ու թէեւ բոլորը գիտեն, թէ ժամանակին ինչպէս վարուած է Զոհարեանը Փաշինեանի նկատմամբ, սակայն նոյն ապօրինութիւնները Փաշինեանի կողմէ կիրարկուելու պարագային, սպառնալիքի մեծ հաւանականութիւն կրնայ ըլլալ վերջինիս երկարակեցութեան», - ըսուած է յօդուածին մէջ:

Յօդուածագիրը խորհուրդ կու տայ դասեր քաղել հարեւան Վրաստանէն, ուր, արդարեւ, «Վրացական երազն» ու «Ազգային շարժումը» ձախողութեան մատնուեցան նաեւ իրենց հակառակորդներուն նկատմամբ հայեցողական արդարադատութիւն իրականացնելու պատճառով:

Աւելի մանրամասն կարդացէ՛ք www.americanwashington.com

Բնագիրը՝ Արեւելահայերէն Աղբիւրը՝ «Իրաւունք» կայք Արեւմտահայերէնի վերածեց՝ ՅԱՐՈՒԹ ԿԻՆԼԻՉԵԱՆ «Չարթօնք»ի աշխատակից

ԶԱՐԹՈՆԵՐ ՍՓՈՐ

Շաբաթական Յաւելում

Ֆուտբոլ

Եւրոպայի Սիւբըր Բաժակ

Աթլետիկո Մատրիտի Անակնկալը

Եւրոպայի Սիւբըր Բաժակի մրցումը տեղի ունեցաւ Չեմփիընզ Լիկի տիտղոսակիր «Ռեալ Մատրիտ»ի եւ Իւրոբա Լիկի բաժակակիր «Աթլետիկո Մատրիտ»ի միջեւ, Եսթոնիոյ մայրաքաղաք Թալլինի «Լը Քոք Արենա» մարզադաշտին վրայ: «Աթլետիկո Մատրիտ»ի Տիեկո Քոսթան օրուան հերոսն էր: Ան առաջին վայրկեանին նշանակեց «Աթլետիկո»ի առաջին կոլը, Կոտինի փոխանցումով: Պենզեմա հաւասարեցուց հաշիւը 27-րդ վայրկեանին, Պելլի փոխանցումով: Այս 63-րդ վայրկեանին Սերժիո Ռամոս տուգանային հարուածով հաշիւը դարձուց 2-1 ի նպաստ «Ռեալ Մատրիտ»ի: Սակայն «Աթլետիկո»ն այլ հաշիւ ուներ: 79-րդ վայրկեանին Տիեկո Քոսթա հաւասարեցուց հաշիւը, Զորրեայի փոխանցումէն օգտուելով: Մրցումին հիմնական ժամանակը աւարտեցաւ 2-2 հաւասար հաշիւով: Երկարաձգումի 98-րդ վայրկեանին Սաուլ նշանակեց «Աթլետիկո»ի 3-րդ կոլը, Փարթիի փոխանցումով: Իսկ 104-րդ վայրկեանին Քոքե «Աթլետիկո»ն անհասանելի դարձուց, երբ նշանակեց 4-րդ կոլը, Վիթոլոյի փոխանցումէն օգտուելով: Մրցումը աւարտեցաւ «Աթլետիկո Մատրիտ»ի 4-2 հաշիւով յաղթանակով: Խումբը շահեցաւ 3-րդ Եւրոպայի Սիւբըր բաժակի տիտղոսը: «Պարսելոնա» եւ «Միլան» այս տիտղոսը շահած են հինգական անգամ, «Ռեալ Մատրիտ» շահած է 4 անգամ, իսկ «Լիվըրփուլ» 3 անգամ:

Չեմփիընզ Լիկի Նախապատրաստական 3-րդ Հանգրուան Սելթիք եւ Սպարտակ Պարտուեցան

Եւրոպայի Չեմփիընզ Լիկի փլէյ օֆի հանգրուանի խումբերը յայտնի դարձան: Ռուսիոյ «Սպարտակ Մոսկուա»ն եւ Սկոտլոյի «Սելթիք»ը չի կրցան հասնիլ փլէյ օֆի հանգրուան, այլ պիտի շարունակեն մրցիլ Իւրոբա Լիկին մէջ: Այս արդիւնքներուն հիման վրայ «Տիւսան Զիլե»ը, «ՊԱԹԷ Պորիսոլ»ը, «ՓԱՕԷ»ը, «Էյ Ի Զէյ Աթէնք»ը, «Տիւսան Զակրէպ»ը, «Վիտի»ն, «Պենֆիլդ»ն, «Սալցպըրկ»ը, «Յրվենա Զվեգտա»ն եւ «Այաքս Ամսթերտամ»ը անցան փլէյ օֆի հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սպարտակ Մոսկուա (Ռուս.) - ՓԱՕԷ Սալոնիք (Յուն.) 0-0, երթ. 2-3
- Էյ Ի Զէյ Աթէնք (Յուն.) - Սելթիք (Սկոտլիա) 2-1, երթ. 1-1
- Ֆեներպահչէ (Թուր.) - Պենֆիլդ (Փոր.) 1-1, երթ. 0-1
- Սիարթ.Թրնավա (Սլովակ.) - Յրվենա Զվեգտա (Սերպ.) 1-2, երթ. 1-1
- Այաքս Ամսթերտամ (Հոլ.) - Սթանտար Լիեժ (Պելճ.) 3-0, երթ. 2-2

Չեմփիընզ Լիկի Փլէյ Օֆ

Այաքս եւ Փի Էս Վի Յաղթեցին

Եւրոպայի Չեմփիընզ Լիկի փլէյ օֆի հանգրուանի երթի մրցումներուն, Հոլանտայի ախոյեան «Փի Էս Վի Այստհովըն»ը եւ «Այաքս Ամսթերտամ»ը կարելոր քայլեր առին դեպի խմբակներու հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Յրվենա Զվեգտա (Սերպ.) - Սալցպըրկ (Աւստ.) 0-0
- ՊԱԹԷ Պորիսոլ (Պելլառ.) - Փի Էս Վի Այստհովըն (Հոլ.) 2-3
- կոլեր.Թիւյոմինէն 9, Յիլեպ 88 - Փերեյրո տուգ.35, Լոզանո 61, Մալէն 89
- Պենֆիլդ (Փոր.) - ՓԱՕԷ Սալոնիք (Յուն.) 1-1
- կոլեր.Փիցցի տուգ.45+1 - Ամր Ուարտա 76
- Եանկ Պոյգ Պեռն (Չեխ.) - Տիւսան Զակրէպ (Իսր.) 1-1
- Վիտի (Հունգ.) - Էյ Ի Զէյ Աթէնք (Յուն.) 1-2
- Այաքս Ամսթերտամ (Հոլ.) - Տիւսան Զիլե (Ուքր.) 3-1
- կոլեր.Վան Տէ Պիք 2, Չիլեշ 35, Թատիչ 43 - Զեյժիորա 15

Լիբանանի Գերբաժակ

Ալ Նըժմէ Տիտղոսակիր

Լիբանանի ֆուտբոլի մրցումները սկսան Գերբաժակի մրցաշարով: Կիսաւարտական հանգրուանին «Ալ Նըժմէ» յաղթեց անցեալ տարուան ախոյեան «Ալ Ահլտ»ին եւ հասաւ աւարտական հանգրուան: Իսկ «Ախաա Ահլի Ալէյ» շարունակեց իր լաւ արդիւնքներու շարքը եւ յաղթելով «Սալամ Զղարթա»ին նոյնպէս հասաւ աւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.



- Ալ Նըժմէ - Ալ Ահլտ 3-1, կոլեր.Յ.Մաաթուք 45+1, Ն.Մաթար 54, Հ.Ալ Մոհամմատ 61 - Խ.Խամիս 11

- Ախաա Ահլի Ալէյ - Սալամ Զղարթա 3-1

Այս մրցաշարի աւարտական մրցումը տեղի ունեցաւ Մարզական Աւանի մարզադաշտին վրայ, «Ալ Նըժմէ»ի եւ «Ախաա Ահլի Ալէյ»ի միջեւ: «Ալ Նըժմէ» յաղթեց 1-0 հաշիւով եւ պահեց տիտղոսը, երրորդ տարին անընդմէջ: Միակ կոլը նշանակեց Ալի Ալատտինը 43-րդ վայրկեանին տուգանային հրապարակին մէջէն կատարուած հարուածով մը:

Սպանիոյ Ախոյեանութիւն

Ռեալ Մատրիտ Առաջատար

Սպանիոյ ախոյեանութեան երկրորդ հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Աթլետիկո Մատրիտ - Ռայօ Վայեքանօ 1-0

կոլ.Կրիզման 63, փոխ.Սալիչ

- Ռեալ Վայաթոլիտ - Պարսելոնա 0-1

կոլ.Ու.Տեմպելէ 57, փոխ.Ս.Ռոպերթօ

- Եսփանիոլ - Վալենսիա 2-0, - Սելիյա - Վիյարեալ 0-0

- Ժիրոնա - Ռեալ Մատրիտ 1-4, կոլեր.Պ.Կարսիա 16 - Ս.Ռամոս տուգ.39, Զ.Պենզեմա տուգ.52, 80, Պելլ 59

Դասաւորում.1-Ռեալ Մատրիտ 6 կէտ 6-1, 2-Պարսելոնա 6 կէտ 4-0, 3-Սելիյա 4 կէտ 4-1:

Անգլիոյ Ախոյեանութիւն

Արսենալ Տօնեց Առաջին Յաղթանակը

Շաբաթավերջին տեղի ունեցան Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 3-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի առաջին մրցումներուն, 17-րդ դիրքը գրաւող «Արսենալ»ը իր դաշտին վրայ մրցեցաւ 19-րդ դիրքը գրաւող «Ուեսթ Յեմ Եունայթըտ»ին դեմ ու տարաւ իր առաջին յաղթանակը: Միտիարեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին «Արսենալ»ի կազմէն: Այս հանգրուանի ամենամեծ անակնկալն էր առաջատար «Մանչեսթըր Սիթի»ի հաւասարիլը 14-րդ դիրքը գրաւող «Վուլվըրհեմփթըն Ուոտտըրըրդ»ի դաշտին վրայ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Վուլվըրհեմփթըն Ուոտտըրըրդ - Մանչեսթըր Սիթի 1-1

- Արսենալ - Ուեսթ Յեմ Եունայթըտ 3-1

կոլեր.Մոնրեալ 30, Տիոփ սիալ.70, Ուելլպէք 90+2 - Արնոթովիչ 25

- Լիվըրփուլ - Պրայթըն Էստ Յոլ Ալպիըն 1-0

կոլ.Ս.Սալահ 23, փոխ.Ֆիրմինօ

- Նիւքեմըր Եունայթըտ - Չելսի 1-2

- Մանչեսթըր Եունայթըտ - Թոթընհեմ Յոնգփըր 0-3

կոլեր.Զէյն 50, Լուքաս Մուրա 52, 84

Դասաւորում.1-Լիվըրփուլ 9 կէտ 7-0, 2-Թոթընհեմ 9 կէտ 8-2, 3-Չելսի 9 կէտ 8-3, 13-Մանչեսթըր Եունայթըտ 3 կէտ 4-7:

Այսօրուան Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել այսօրուան օրերու մրցումներու յայտագիրը.

ԾԱՐԹՈՆԵՐ ՍՓՈՐ Շաբաթական Յաւելում

ՉԵՄՓԻՆՆԵՆԸ ԼԻԿԻ ՓԼԵՅ ՕՏԻ ԶԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁ

Ժամը 22:00 Սալցպըրկ (Աւստ.) - Յրվենա Չվեգտա (Սերպիա)
Ժամը 22:00 Փի Էս Վի Այնտհովըն (Հոլ.) - ՊԱԹԵ Պորիսով (Պելառ.)
Ժամը 22:00 ՓԱՕԲ Սալոնիք (Յուն.) - Պենֆիքա (Փորթ.)

ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 6-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ

Ժամը 13:00 Շիրակ Կիւմրի (8) - Ալաշկերտ (4)
Ժամը 15:00 Բանանց (7) - Փինիկ (1)

ԸՈՓԱ ԼԻԳԵՐԱՍՈՐԵՍԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁ

Ժամը 01:30 Ռիվըր Փլեյթ (Արժ.) - Ռասինկ (Արժ.)
Ժամը 03:45 Զորինթիոն (Պր.) - Զոլո Զոլո (Չիլի)
Ժամը 03:45 Զորուգեյո (Պր.) - Ֆլամենկո (Պր.)

ԱՓՐԻԿԵԻ ԸՈՆՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՄՏԻ 6-ՐԴ ԶԱՆԳՐ.

Ժամը 16:00 Իւ Էս Էմ Ալժէ (Ալճ.) - Կոր Մահիա (Զենիա)
Ժամը 19:00 Էնյիմպա (Նիկերիա) - Պրազապիլ (Զոնկո)
Ժամը 22:00 ԱՍԵԲ Միմոզազ (Փղ.Ափ.) - Վիթա Զլապ (Դեմ.Զոնկո)
Ժամը 22:00 Պըրքան (Մար.) - Սոնկո (Մոզամբիք)

ԱՍԻՈՅ ՉԵՄՓԻՆՆԵՆԸ ԼԻԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄՆԻ ԵՐԹ

Ժամը 13:00 Ժոնպուք Մոր. (Հար.Զոր.) - Սուլուն Պլուուինկզ (Հար.Զոր.)

ԹԵՆԻՍԻ ԱՍՆ-Ի ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐԹԻ 1/32-ՐԴ ԱՄԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄ

Ժամը 18:00-Էն սկսեալ «eurosport» եւ «beinsports» կայաններէն

ՀԵԾԵԼԱՐՇԱԽ ԿՈՒԵԼԹԱ Ա ԷՍՓԱՆԻԱ ՇՐՉԱՎԱՇԵԻ 5-ՐԴ ԶԱՆԳՐ.

Ժամը 13:00-Էն սկսեալ «eurosport» եւ «beinsports» կայաններէն

ԱՍԻԱԿԱՆ ԽԱԳԵՐՈՒ 11-ՐԴ ՕՐ

Ժամը 13:00-Էն սկսեալ «beinsports» կայանէն

Ճատրակ

Սիւքֆիլտ Զափ

Արոնեան Բաժնեց Առաջատարի Դիրքը

ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքին մէջ աւարտեցան «Կրանտ Չես Թուր»-ի չորրորդ փուլի «Սիւքֆիլտ Զափ»-ի մրցումները տասը մեծ վարպետներու մասնակցութեամբ: Մրցաշարքի իններորդ հանգրուանին Հայաստանի մեծ վարպետ Լեւոն Արոնեան ճերմակ քարերով մրցեցաւ ռուս Ալեքսանտր Կրիշչուքին դէմ եւ տարաւ իր երկրորդ յաղթանակը: Աշխարհի ախոյեան Մակնուս Զարիսըն յաղթեց Հիքարու Նաքամուրային, իսկ առաջատար Ֆապիանօ Զարուանա հաւասարեցաւ Ուելսի Սոյին հետ: Երեք վարպետները հաւասարեցան կետերով եւ յաւելեալ ցուցանիշներով: Երեքն ալ համաձայնեցան բաժնուիլ կետերը եւ գումարը:

Ինը հանգրուան ետք վերջնական դասաւորումը հետեւեալն է.

- 1-Զարուանա-ԱՄՆ 5.5 կետ, 2-Մակնուս Զարիսըն-Նորվեկիա 5.5 կետ, 3-Արոնեան-Հայ. 5.5 կետ

Ֆութսալ

Եւրոպայի Կիներու Ախոյեանութիւն

Հայաստան Երկրորդ

Ֆութսալի Հայաստանի կիներու հաւաքականը Մոլտովայի մէջ մասնակցեցաւ Գ.խմբակի գտումի մրցումներուն: Արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Մոլտովա - Հայաստան 0-1, կղ.Անի Կարապետեան 5
- Պելառուսիա - Հայաստան 5-2
- կղեր.Է.Լուցքեվիչ 14, Ա.Լինսիք 16, 17, 33, Ա.Փոփովա 39 - Լ.Յովհաննիսեան 10, Ա.Խաչատրեան տուգ.27
- Պելառուսիա - Մոլտովա 3-3
- Դասաւորում.1-Պելառուսիա 4 կետ 8-5, 2-Հայաստան 3 կետ 3-5, 3-Մոլտովա 1 կետ 3-4
- Պելառուսիա գրաւեց առաջին դիրքը եւ անցաւ Եւրոպայի ախոյեանութեան գտումի յաջորդ հանգրուան:

Թենիս

Սիւսիւնաթի Մասթըրզի Մրցաշարք

Խաչանով Չիչեցաւ 3-րդ Հանգրուանին

Այս տարուան թենիսի 7-րդ մասթըրզի մրցաշարքի՝ Սիւսիւնաթի մրցաշարքի 1/32-րդ հանգրուանին Կարէն Խաչանով յաղթեց սպանացի Ռամոս Վինիոլասին 2-6, 6-3, 6-2 հաշիւով: 1/16-րդ հանգրուանին յաղթեց

ամերիկացի Սեմ Զուերիին 7-5, 6-4 հաշիւով ու անցաւ վերջին 16-ի հանգրուան, ուր մրցեցաւ թիւ 7 դասուած խրուաթ Մարին Չիլիչին դէմ եւ պարտուեցաւ 6-7 թպ 5-7, 6-3 եւ 4-6 հաշիւով:

Տղոց մրցաշարքի աւարտական հանգրուանին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

Ն.Ճոքովիչ (10) - Ռ.Ֆետերեր (2) 6-4, 6-4

Այս արդիւնքին հիման վրայ սերպ Նովաք Ճոքովիչ շահեցաւ մրցաշարքին տիտղոսը եւ մրցանիշ արձանագրեց, դառնալով առաջին մարզիկը որ կրցաւ շահիլ ինը մասթըրզի մրցաշարքերու տիտղոսները, «Մեծ Սաղաւարտ»-ի չորս տիտղոսներ եւ մասթըրզի աւարտականի տիտղոսներ:

Կիներու մրցաշարքի աւարտական հանգրուանին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Զ.Պերթենս - Ս.Հալէփ (1) 2-6, 7-6 թպ 8-6, 6-2

Այս արդիւնքին հիման վրայ չորսուած հոլանտացի Զիքի Պերթենս յաղթեց թիւ 1 դասուած ռումանացի Սիմոնա Հալէփին եւ շահեցաւ իր առաջին Սիւսիւնաթի մասթըրզի տիտղոսը:

Աթլետիկ

Լիբանանի Խմբային Ախոյեանութիւն

Բանակ Եւ Ինթեր Լիպանոն Տիտղոսակիր

Լիբանանի Աթլետիկի ֆետերասիոնը կազմակերպեց երկրի խմբային ախոյեանութիւնը, որ տեղի ունեցաւ Մարզական Աւանի եւ Ժամհուրի մարզադաշտերուն վրայ: Տղոց մրցումներուն «Բանակ»-ի խումբը պահեց տիտղոսը, իսկ անակնկալը արձանագրուեցաւ կիներու մրցաշարքին, ուր առաջին անգամ ըլլալով «Ինթեր Լիպանոն» խումբը գրաւեց առաջին դիրքը յառաջ անցնելով անցեալ տարուան ախոյեան «Ժամհուր»-ի խումբէն: Ստորեւ տեսնել խումբերու դասաւորումը.

Կիներ. 1-Ինթեր Լիպանոն 214.46 կետ, 2-Ժամհուր 164.10 կետ, 3-Մարիսթ Շանվիլ 70.01 կետ

Տղաք. 1-Բանակ 287.14 կետ, 2-Ալ Ապթալ 152.58 կետ, 3-Ժամհուր 105.01 կետ

Հեծելարշաւ

Եւրոպայի Երիտասարդներու Ախոյեանութիւն

Էտկար Ստեփանեան Գրաւեց Առաջին Դիրքը

Չուիցերիոյ մէջ տեղի ունեցող հեծելարշաւի Եւրոպայի մինչեւ 23 տարեկան ախոյեանութեան մրցումներուն, Հայաստանի ներկայացուցիչ Էտկար Ստեփանեան 40 քմ.խմբային վազք մրցումին շահեցաւ 98 կետ եւ դարձաւ Եւրոպայի ախոյեան: Չորս քիլոմետր հալածանքի մրցումին, ստեփանեան գրաւեց 11-րդ դիրքը: Սքրէչ մրցումին, Ստեփանեան գրաւած էր 12-րդ դիրքը:

Ֆորմիւլա 1

13-րդ Հանգրուան-Պելճիքա

Վեթէլ Սօտեցաւ Հեմիլթընին

Ֆորմիւլա 1-ի 13-րդ մրցումը՝ Պելճիքայի Կրան Փրին տեղի ունեցաւ Կիրակի օր «Սփա Ֆրանքորշան» մրցահրապարակին վրայ: «Ֆերրարի»-ի առաջին վարորդ գերմանացի Սեպասթիան Վեթէլ շահեցաւ այս տարուան իր 5-րդ տիտղոսը եւ մօտեցաւ առաջատար Հեմիլթընին: Առաջատար եւ «Մերսեդես»-ի առաջին վարորդ բրիտանացի Լուիս Հեմիլթըն գրաւեց 2-րդ դիրքը, իսկ «Ռէտ Պոլ Ռէյսինկ»-ի թիւ 1 վարորդ հոլանտացի Մաքս Վերսթափըն գրաւեց 3-րդ դիրքը: Ստորեւ տեսնել մրցումին արդիւնքը, վարորդներու եւ ընկերութիւններու դասաւորումը.

- 1-Սեպասթիան Վեթէլ-Գերմանիա, Ֆերրարի, 1:23:34.476 ժամ
- 2-Լուիս Հեմիլթըն-Բրիտանիա, Մերսեդես, 11,061 երկվ.ուշ
- 3-Մաքս Վերսթափըն-Հոլանտա, Ռէտ Պոլ Ռէյսինկ, 31,372 երկվ.ուշ
- Վարորդներու դասաւորումը 13 հանգրուան ետք.
- 1-Լուիս Հեմիլթըն-Բրիտանիա, Մերսեդես, 231 կետ
- 2-Սեպասթիան Վեթէլ-Գերմանիա, Ֆերրարի, 214 կետ
- 3-Զիմի Ռայքոնեն-Ֆինլանտա, Ֆերրարի, 146 կետ
- Ընկերութիւններու դասաւորում.
- 1-Մերսեդես 375 կետ, 2-Ֆերրարի 360 կետ, 3-Ռէտ Պոլ Ռէյսինկ 238 կետ

Հայ ժողովրդական Կուսակցության Ղեկավար Միքայել Պապաճանեանի Հասարակական-Քաղաքական Գործունեությունը

ԳՈՂԱՐ ԱՄԱԳԵԱՆ

ՀՀ Ազգային Արխիվի Վաստակաշատ Արխիվագետ

Դեռևս 1918 Նոյեմբերի 30-ին Պողոս Նուպարը յայտարարել էր «Ամբողջական Հայաստանի» անկախությունը[403], իսկ 1919 Փետրուարի 6-13-ը Երեւանում կայացած Արեւմտահայ Բ. համագումարը իր ընդունած քաղաքական բանաձեւում «վճռական որոշում ու կամք է յայտնում համագաղափարի հատուածների եւ երկրամասերի միաւորութեամբ քաղաքական ու պետական մէկ միութիւն ունենալուն»: Որոշման 5-րդ կետով նախատեսուում էր պարտադրել նորընտիր Գործադիր Մարմինն «գործնական քայլեր անել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան եւ Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու եւ իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական եւ օրէնսդրական հաստատութիւնների մէջ համագաղափար միութիւնը իրականացնելու համար»[404]: Համագումարի վերջին՝ 6-րդ նիստում ընտրուած գործադիր մարմինը դիմեց Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանին՝ խնդրելով իրականացնել Միացեալ Անկախ Հայաստանի գաղափարը[405]: Աւելացնենք, որ Փարիզում գումարուած Ազգային Ա. Համագումարը՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը յղած հեռագրում գրում էր. «Սրտագին կը մաղթենք, որ ընդհուպ իրականանայ Միացեալ Հայաստանի Հանրապետութեան կազմակերպութիւնը եւ լիայոյս ենք, որ ձեր եւ մեր ջանքերով պիտի պսակուին մեր իղծերը՝ ընդհանուր խաղաղութեան կնքման պահուն՝ ազգային դատին կատարեալ յաղթանակով»[406]: Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից Մայիսի 28-ին յայտարարուած «Միացեալ եւ Անկախ Հայաստանի» ակտը եւ 12 արեւմտահայերի խորհրդարանի կազմում ընդգրկելը ընդունուել էր Հայաստանի խորհրդարանի կողմից Ապրիլի 27-ի նիստում ՀՀ կառավարութեան տուած յատուկ լիազօրութիւնների հիման վրայ[407]: Ակտի դեմ առաջինը բողոքեց կոալիցիոն կառավարութեան մաս կազմող Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը: Յունիսի 4-ին հրաւիրուած խորհրդարանի նիստի ժամանակ, որին մասնակցում էին նաեւ 12 արեւմտահայ պատգամաւորները (բոլորը դաշնակցական) ՀԺԿ-ի եւ սոցիալիստական խմբակցութեան անդամները ի նշան բողոքի ցուցադրաբար լքեցին խորհրդարանի դահլիճը [408]: Որից յետոյ ՀԺԿ-ի կենտրոնական կոմիտէն ետ կանչեց կառավարութիւնից իր ներկայացուցիչներին, իսկ Յունիսի 18-ին ՀԺԿ-ի կենտրոնական կոմիտէն դիմեց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը՝ պահանջելով ետ վերադարձնել Մայիսի 22-ին Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովին ներկայացուած

խորհրդարանական ընտրութիւնների իր թեկնածուների ցուցակը՝ յայտարարելով, որ իրենք բոլորում են այդ ընտրութիւնները[409]: ՀԺԿ կենտկոմը իր բողոքը պատճառաբանում էր նրանով, որ նախ՝ Միացեալ եւ Անկախ Հայաստանի յայտարարման ակտը կատարուել է առանց Արեւմտեան Հայաստանի ներկայացուցիչների համաձայնութեան, երկրորդ, որ բացառապէս ռուսահայերից կազմուած կառավարութիւնը իրաւունք չունի իրեն յայտարարել Միացեալ Հայաստանի կառավարութիւն եւ երրորդ, որ խորհրդարան մտած 12 արեւմտահայ պատգամաւորները չեն կարող համարուել արեւմտահայերի կամքի արտայայտիչներ, եւ մեխանիկորէն նրանց խորհրդարան մտցնելը հետապնդում է Դաշնակցական կուսակցութեան դիրքերը ուժեղացնելու միտում[410]: Ալեքսանդր Խատիսեանին ուղղած նամակում Միքայել Պապաճանեանը, անդրադառնալով այս հարցին, գրում էր, որ ինքը լիովին կիսում է ՀԺԿ-ի արտայայտած կարծիքը[411]:

1920 Մայիսի 5-ից մինչեւ Յունիսի 13-ը Փարիզում հրաւիրուած ազգային Բ. Համագումարը որոշեց, որ Թուրքիայի հետ հաշտութեան դաշնագրի ստորագրումից յետոյ Ազգային Պատուիրակութիւնը պետք է լուծարուի՝ միաժամանակ նշելով, որ «կրնան պատահիլ բացառիկ պարագաներ, որոնք անհրաժեշտ կը դարձնեն անոր տակաւին ժամանակ մը եւս պաշտօնավարութիւնը»[412]:

Սակայն Սեւրի պայմանագրի ստորագրումից յետոյ Պողոս Նուպարը որոշեց շարունակել պատուիրակութեան գործունեութիւնը, քանի որ պայմանագիրը ստորագրած ՀՀ կառավարութիւնը չէր կարող զբաղուել Կիլիկիայի խնդրով: Սկզբնական շրջանում պատուիրակութեան գործողութիւնները հիմնականում ուղղուած էին Կիլիկիայի համար ինքնավարութիւն ձեռք բերելուն ու կիլիկիահայութեան շահերն ու ֆիզիքական գոյութիւնը պաշտպանելուն:

Համագումարի վերընտրած պատուիրակութիւնը ուներ հետեւեալ կազմը.՝ Նախագահ՝ Պողոս Նուպար, փոխնախագահ՝ Գ. Նորատունկեան, անդամներ՝ Գ. Սինապեան եւ Մ. Պապաճանեան[413]: Վերջինիս ներկայութիւնը պայմանաւորուած էր նրանով, որ Ազգային Պատուիրակութեան կազմը ձեւաւորելիս Պողոս Նուպարը անհրաժեշտ համարեց ընդգրկել նաեւ մէկ ռուսահայ, որպէսզի նա, իր պատկերացմամբ, կարողանար ներկայացնել ողջ ազգը: Դրա կապակցութեամբ Հայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան կենտրոնական կոմիտէն 1921 Փետրուարի 11-ին Պողոս Նուպարին յղած նամակում գրում էր. «Պ. Պապաճանեանի մասին մեր կարծիքն այն է, որ նա որպէս ռուսական եւ ռուսահայկական կեանքին ծանօթ մէկը, ինչպէս նաեւ իւր յայտնի իրաւաբանի եւ հայասեր հայու հանգամանքով կրնայ լաւագոյն կերպով անդա-

մակցել թրքահայ պատուիրակութեան մը, մենք առանձին հեռագրով եւ նամակաւ իրեն ալ յայտնեցինք մեր այս փափաքը, յայտնելով ամբողջ հայութիւնը ներկայացնող պատուիրակութեան մը կազմութեան մասին մեր կուսակցութեան տեսակետը, որ իրեն ալ տեսակետը եղած է միշտ»[414]: Նոյն ամսի 21-ին Պապաճանեանին ուղղած նամակով ՀՌԱԿ կենտրոնական կոմիտէն պարզաբանում է իր տեսակետը Հայկական Հարցի լուծման մասին.

«Ա. Հայաստանի համար հոգատարութիւն բացարձակապէս անհրաժեշտ է.

Բ. Ուիլսոնի իրաւարարութեամբ գծուած սահմաններէն կարելի է զիջումներ ընել ներքնագաւառներէն, բայց ոչ մէկ առթիւ ծովեզերքէն.

Գ. Եթէ մեզի զլանան թե՛ մին եւ թե՛ միւսը, անմիջապէս փնտռելու է տեղ մը, ուր հնար լինի այս ցեղին բեկորները վերջնական քնաջնջումէ փրկել: Այդ տեղը պիտի ըլլայ Կիլիկիան»[415]: Կուսակցութեան համոզումը այն էր, որ Հայաստանի յարատեւութեան կարելորագոյն պայմաններ են ծովեզերք ունենալն ու դաշնակիցների հոգատարութիւնը, քանի որ «առանց այս երկու պայմաններուն ստեղծուած Հայաստանի մը մէջ, ինչքան ալ մեծ ըլլայ ան, հայերու առաջին մտածումը պիտի ըլլայ զանգուածային արտագաղթ դեպի Ամերիկա, եթէ հնար լինի, դեպի այլուր, դեպի այն ամէն տեղ, որ Հայաստան չէ»[416]:

Այդ նոյն նամակում ՀՌԱԿ կենտրոնական կոմիտէն իր գարմանքն ու վրդովմունքն է յայտնում այն լուրերի առթիւ, ըստ որի՝ Ազգային եւ ՀՀ պատուիրակութիւնները պետք է համագործակցեն եւ հանդէս գան ընդհանուր ծրագրով. «Այս քանիտրորդ անգամն է, որ կը խաբուին, եւ ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Պողոս Նուպար, որ իր իրաւասութիւնը կը ստանայ Պոլսոյ համագումարէն, պետք չի տեսներ զինք նշանակեալ մարմինէն հրահանգ ուզելու: Կը զգա՞յ արդեօք, թէ ի՞նչ մեծ ռիսկ է, որ կ'ընէ ժողովրդին լինելուն եւ չլինելուն հետ կապուած այս գերազանցապէս քաղաքական հարցին մէջ՝ առանց քաղաքական կուսակցութեանց գործակցութեան եւ տեսակետին, պատասխանատուութիւն ստանձնելով»[417]:

Վերոգրեալը հաշուի առնելով՝ ՀՌԱԿ կենտրոնական կոմիտէն հրահանգում է իր կուսակից, Ազգային Պատուիրակութեան անդամ Միքայել Պապաճանեանին հետեւեալը. «Մենք կը կարծենք, որ Դուք մօտէն տեղեակ ըլլալով Դաշնակցութեան դաւերուն եւ կատարելապէս համամիտ լինելով մեր սոյն տեսակետներուն, այն թուական երբ կը տեսնէք, թէ Նուպար կամ Սինապեան կը տկարանան եւ այդ կերպով Դաշնակցութեան տեսակետից կը դիտեն, անմիջապէս կը հեռանաք պատուիրակութենէն, թոյլ չտալով, որ անոնց տկարութեան պատասխանատուութիւնէն պատմութեան մէջ բաժին մըն ալ անցնի մեր կուսակցութեան հաշուոյն»[418]:

Շար. 41

[403] ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1:
 [404] Համահայկական Խորհրդակցութիւններ, էջ 303:
 [405] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 126:
 [406] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 36, թ. 4:
 [407] Հայաստանի Հանրապետութիւն (Քաղաքական Պատմութիւն), էջ 106:
 [408] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 145, թ. 33:
 [409] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, թ. 439:
 [410] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 145, թ. 33:

[411] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 226, թ. 2 շրջ.:
 [412] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 50, թ. 12:
 [413] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 50:
 [414] ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 5, թ. 7:
 [415] Նոյն, թ. 12-13:
 [416] Նոյն, թ. 11:
 [417] Նոյն, թթ. 10-11:
 [418] ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 5, թ. 13:

Հայրենի Լուրեր

Էջ 01

Արմեն Սարգսյան Եւ Արա Պապլոյեան Բնարկած Են Երկրին Մէջ Տիրող Ներքաղաքական Իրավիճակը

ուղղուած բոլոր քայլերը պետք է ըլլան ժողովրդավարական չափանիշներուն համապատասխան, քաղաքական երկխօսութեան, բանակցութիւններու եւ քննարկումներու մթնոլորտին մէջ:

Հանրապետութեան նախագահը, կարեւորելով սահմանադրութեան գերակայութեան իրամայականը, վերահաստատած է իր դիրքորոշումը, որ խնդիրները լաւագոյնս կը լուծուին երկխօսութեան եւ բանակցութիւններու միջոցով, որոնց ընթացքին ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները կը յարգեն կողմերը՝ հետեւողականօրէն կատարելով այդ պայմանաւորուածութիւններուն միտուած գործողութիւններ՝ միաժամանակ դասեր քաղելով եւ արձանագրելով յաջողութիւնները:

Փաշինեան-Պապլոյեան Հանդիպումը Ցոյց Տուաւ, Որ ԱԺ-ը Կառավարութեան Կցորդը ՉԷ, Այլ Գործընկերը. Շարմազանով



ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը Փաշինեան-Պապլոյեան գրոյցը կը կարեւորէ անով, որ անկէկա անգամ մը եւս ցոյց տուաւ՝ ԱԺ-ը կառավարութեան կցորդը չէ:

«Արմենփրես»-ի հաղորդմամբ՝ Շարմազանովը նման տեսակետ յայտնեց լրագրողներուն հետ ճեպագրոյցի ժամանակ:

«Փաշինեան-Պապլոյեան հանդիպումը կարեւոր էր ոչ թէ մէկ տարուան խօսակցութեամբ, այլ անով, որ անգամ մը եւս ի ցոյց դրուեցաւ, որ ԱԺ-ը ոչ թէ ՀՀ կառավարութեան կցորդն է, այլ օրէնսդիր մարմին, իշխանութեան առանձին ճիւղ: ԱԺ-ը կառավարութեան գործընկերն է, բայց ոչ երբեք կցորդը: Մենք ունինք մեր օրակարգը», - ըսաւ Շարմազանովը:

ԱԺ փոխխօսնակի խօսքով՝ իրենք պատրաստ են երկխօսութեան, պատրաստ են նաեւ որեւէ հարցի շուրջ բանակցելու կառավարութեան իրենց գործընկերներուն հետ:

Էջ 08



Գերմանիան Շահագրգռուած Է ՀՀ Տարածաշրջանին Մէջ Խաղաղութեան Հաստատմամբ. ՀՀ ԱԳՆ Ներկայացուցիչ

Գերմանիան շահագրգռուած է ՀՀ տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան հաստատմամբ եւ պատրաստ է քաղաքական պատասխանատուութիւն ստանձնելու այս հարցի գծով:

«Արմենփրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին Օգոստոս 28-ին տեղի ունեցած ճեպագրոյցի ընթացքին լրագրողներուն յայտնեց ՀՀ ԱԳՆ մամուլի խօսնակի ժամանակաւոր պաշտօնակատար Աննա Նաղդալեանը:

«Գերմանիոյ վարչապետը Հայաստան կատարած այցի ընթացքին անգամ մը եւս վերահաստատած է, որ իրենք յանձնառու են արցախեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման: Ան շեշտած է, որ կարգաւորումը պետք է տեղի ունենայ այնպիսի մթնոլորտի մը մէջ, որուն պատրաստ ըլլան բոլոր կողմերը: Մերքեւը նշած է նաեւ, որ իրենք պատրաստ են քաղաքական



պատասխանատուութիւն ստանձնելու այս հարցի գծով», - ըսաւ Նաղդալեանը:

ԱԳՆ մամուլի խօսնակի ժամանակաւոր պաշտօնակատարի խօսքով՝ Մերքեւը արցախեան խնդիրին անդրադարձած է նաեւ Պաքուի մէջ:

«Պաքուի մէջ, խօսելով այս հարցին շուրջ, Մերքեւը նշած է, որ հակամարտութեան գօտիին մէջ ապրող մարդոց խնդիրներուն պետք է իրական լուծումներ տրուին», - ըսաւ Աննա Նաղդալեանը:

Միջազգային Լուրեր

Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովը Աւարտած Է ԵԱՏՄ-ի Մէջ Դեղերու Միասնական Շուկայի Ձեւաւորումը

Եւրասիական տնտեսական յանձնաժողովը աւարտած է Եւրասիական տնտեսական միութեան մէջ դեղերու միասնական շուկայի ձեւաւորումը:

Ինչպէս կը փոխանցէ «Արմենփրես»-ը, Եւրասիական տնտեսական յանձնաժողովի մամուլի ծառայութենէն կը տեղեկացնեն, որ «Ռուսաստանն ու աշխարհը. դեղագործական շուկայի աճի ներուժի կառավարում» թեմայով գիտաժողովի ժամանակ այս մասին յայտնած է Եւրասիական տնտեսական յանձնաժողովի կանոնակարգման խորհուրդի անդամ (նախարար) Վալերի Բորեշչովը:

«Մենք կատարած ենք Եւրասիական տնտեսական միութեան ծիրէն ներս մեր առջեւ դրուած հիմնական խնդիրը՝ բնակչութեան եւ առողջապահութեան մասնագետներուն հասանելի դարձնել անվտանգ, բարձրորակ եւ արդիւնաւետ դեղամիջոցները: Իսկոյն յայտնեմ, որ շուտով պիտի ստեղծուի դեղերու միասնական շուկայի գործունեութեան իրաւական եւ տեղեկատուական համալիր», - գիտաժողովի մասնակիցներուն ըսած է ԵՏՀ նախարարը:

Իր խօսքով՝ Միութեան տեղեկատուական համակարգի համալիր փորձարկումը յաջողութեամբ աւարտած է, որ նախատեսուած է ապահովելու դեղերու գրանցման բոլոր գործընթացները: ԵԱՏՄ երկիրներու լիազօր մարմինները ստուգած են հաստատած են մէկ էլեկտրոնային գրանցման հնարաւորութիւնը: 2018 թուականի Օգոստոսին Ղազախիստանի մէջ ընդունուած են, Միութեան կանոններու համաձայն, դեղերու գրանցման առաջին վեց յայտերը, իսկ երկուքը՝ Պելառուսի մէջ:

Վալերի Բորեշչովը նշած է, որ ամբողջովին մշակուած է տեսչական ստուգումներու իրականացումը Միութեան GMP կանոններուն համաձայն: Պելառուսի մէջ նման ստուգման կայացման առաջին երկու յայտերը ընդունուած են: Արտադրողը, որ պատրաստ է անցնելու համապատասխան ընթացակարգը, կրնայ դիմել ԵԱՏՄ անդամ որեւէ երկրի տեսչական մարմինին:



Միջոցառումի մասնակիցները քննարկած են GMP համակարգի ներդրումը Միութեան շուկային մէջ դեղագործական իրաքանչիւր ձեռնարկութեան համար, ինչպէս նաեւ երկիրներու դեղագործական տեսուչներու կազմակերպման եւ փոխգործակցութեան հարցերը: «Այս խնդիրներուն յաջող լուծումը կ'ապահովէ մեր արտադրողներու մուտքը միջազգային շուկայ, կը բարձրացնէ դեղագործական արդիւնաբերութեան արտադրած դեղերու մրցունակութիւնը», - ըսած է Վալերի Բորեշչովը:

Վերլուծական մեթոտներու վաւերացման միասնական մօտեցումներու շնորհիւ դեղերու որակի վերահսկման արդիւնքները պիտի ընդունուին Միութեան բոլոր վերահսկիչ աշխատանոցները:

Յանձնաժողովի եօթը յանձնարարականները կը սահմանեն ջրապատրաստման եւ արտադրութեան գործընթացներու մօտեցումները, ինչը թոյլ կու տայ հաստատելու արտադրութեան գործընթացի կայունութիւնը՝ ըստ ընդհանուր սկզբունքներու եւ կանոններու:

Այսպիսով, բոլոր պայմանները ստեղծուած են անվտանգ, բարձրորակ եւ արդիւնաւետ դեղամիջոցներու ազատ տեղաշարժի համար, որոնք կ'օգնեն պահպանելու առողջութիւնը ԵԱՏՄ-ի միլիոնաւոր քաղաքացիներուն:

Լիբանանեան Լուրեր

Էջ 01

Աուն Բարձր Կը Չափազանց Ընդհանուր Անվտանգութեան Ուժերու Կատարած Չոհողութիւններն Ու Ձանքերը

Նախագահ Միշել Աուն Երեքշաբթի շնորհաւորանքներ յղեց Ընդհանուր անվտանգութեան պետ, գլխաւոր հրամանատար Ապպաս Իպրահիմի անվտանգութեան ուժերու 73-րդ տարեդարձին առթիւ:

Պապատայի նախագահական պալատին մէջ Իպրահիմի հետ հանդիպումի ընթացքին Աուն բարձր գնահատեց գործակալութեան ի գործ դրած ջանքերը, անոր անդամներուն կատարած զոհողութիւններն ու յանձնառած առաքելութիւնները: Այս մասին կը տեղեկանաք նախագահական գրասենեակի կատարած յայտարարութենէն:

Երկուշաբթի Ընդհանուր անվտանգութիւնը նշեց իր 73-րդ տարեդարձը: Իպրահիմի գլխաւորութեամբ միջոցառումը տեղի ունեցաւ «Ան որ մարտիրոսութեան կ'երթայ, կը յաղթական եւ երկիրը կը վերաշինէ» կարգախօսին տակ, ի ներկայութիւն ռազմական գործողութեան ժամանակ զոհուած կամ վիրաւորուած անվտանգութեան ուժերու զինծառայողներու ընտանեկան պարագաներուն:

Պըրրի Կոչ Կ'ընէ Աւելի Մեծ Թափ Հաղորդելու Նոր Կառավարութեան Կազմաւորման Գործընթացին

Խորհրդարանի նախագահ Նապիի Պըրրի Այն Ալ Թինէի իր նստավայրին մէջ այցելուներու հետ հանդիպումի ժամանակ վեր հանեց կառավարութեան կազմաւորման շուրջ բանակցութիւններուն աւելի մեծ թափ հաղորդելու անհրաժեշտութիւնը: Այս մասին Երեքշաբթի հաղորդեց «Ալ ժումհուրիա» օրաթերթը:

«Աշխատանքային բոլորովին տարբեր թափ կ'ակնկալուեր Հարիրիի վերադարձէն ետք», - ըսաւ այցելուներուն ՚ի պատասխան կառավարութեան կազմաւորման վերջին զարգացումներուն վերաբերեալ ուղղուած հարցին, որ, յիրաւի, թեւակոխած է չորրորդ ամիսը՝ առանց նկատառելի շարժի:

Յիշեցնենք, որ կազմաւորման գործընթացի փակուղին պայմանաւորուած է քաղաքական զանազան կողմերու առաջադրած հակընդդէմ պահանջներով, որուն արդիւնաւետ լուծման ուղղութեամբ Հարիրի յանձնառած է նախարարաց խորհուրդի պաշտօնէութեան ցանկի ամբողջացումը:

Հայրենի Լուրեր

Էջ 07

ՀՀԿ-ը Քաղաքապետի Յառաջիկայ Ընտրութիւններուն Թեկնածու Պիտի Չառաջադրէ. Շարմազանով



Երեւանի աւագանիի յառաջիկայ ընտրութիւններուն ՀՀԿ-ը քաղաքապետի թեկնածու պիտի չառաջադրէ: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը այս մասին ըսաւ լրագրողներուն հետ ճեպագրոյցի ժամանակ: Շարմազանովը այդ մէկը հիմնաւորեց շարք մը հանգամանքներով, նախ եւ առաջ անով, որ իրենք յետյեղափոխական իրավիճակին մէջ արտաքին եւ ներքին աւելի կարելոր հարցեր կը տեսնեն, քան ՏԻՄ ընտրութիւնները:

«Երեւանի աւագանիի ընտրութիւններուն մեր չմասնակցիլը պայմանաւորուած է շարք մը հանգամանքներով, նախ եւ առաջ անով, որ Հայաստանի մէջ այսօր յետիշխանափոխական իրավիճակ է, հիմնական թատերաբեմը ԱԺ-ն է, եւ արտաքին ու ներքին աւելի կարելոր մարտահրաւերներ կան Հայաստանի համար, քան ՏԻՄ ընտրութիւնները, - ըսաւ Շարմազանովը եւ աւելցուց: - Քաղաքական գործիչները իրադարձութեան փոփոխութեան պայմաններուն մէջ կրնան փոխել իրենց կարծիքը: Հիմա թերեւս քաղաքական դաշտին վրայ աւելի լուրջ հարցեր կան, քան ՏԻՄ ընտրութիւնները», - ըսաւ ան: ԱԺ նախագահի տեղակալը յայտնեց նաեւ, որ կուսակցութեան մէջ տակաւին չեն քննարկած, թէ որո՞ւն պիտի սատարեն յառաջիկայ ընտրութիւններուն:

Անդրադառնալով ԱԺ ընտրութիւններուն մասնակցութեան՝ Շարմազանովը նշեց, որ եթէ ՀՀԿ-ը չմասնակցի անոնց, ապա «պետք է մեծ կողպէք մը դնէ դրան վրայ եւ փակուի»: «ՀՀԿ-ը ստեղծուած չէ, որ թէկուզ իշխանափոխութենէն ետք, չմասնակցի ԱԺ ընտրութիւններուն», - եզրափակեց Էդուարդ Շարմազանովը:



Միխթարեան Հայրենի Վարժարանի տնօրէնութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, որ դպրոցին ընդհանուր վերամուտը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 1 Յոկտեմբեր 2018-ին, եւ որ վարժարանը կրթական համակարգի հիմք կ'ընդունի ֆինլանտական ուսումնական սկզբունքները:

Ուշադրութիւն.

Այս տարեշրջանին համար դպրոցը կը տրամադրէ փոխադրութեան անվճար սպասարկութիւն:

Իսկ Երկուշաբթի, 17 Սեպտեմբեր 2018-ին, տեղի պիտի ունենայ «Բաց Դռներ»-ու միջոցառում, լիբանանահայ համայնքին մօտէն ծանօթացնելու համար վարժարանը եւ անոր բաժանումները:

Յիշեցնենք, որ 2018-2019 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին ամէն օր առաւօտեան ժամը 9-էն մինչեւ ժամը 2:

Միխթարեան Վարժարան...21-րդ դարու ուսումնարան:
Հասցէ՝ Ռաուտա, Սէն Լազար փարք:
Հեռաձայն՝ 76/316042
Whatsapp: 81/433257

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ իրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեանս տեսակետը: Կամքէ անկախ սպորտած վրիպակներու պարագային, կ'ապաւինիք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ
Արմէն Յարութիւնեանի մահուան քառասունքին առիթով հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 2 Սեպտեմբեր 2018-ին Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ սուրբ պատարագի:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Գրիգոր Թեհեանի մահուան տխուր առիթով Տեր եւ տիկ. Կարապետ Պապահեքեան կը նուիրեն՝
ՌԱԿ «Պայքար» ակումբին 50,000 Լ.՛ն
«Չարթօնք» օրաթերթին 50,000 Լ.՛ն

Լրատուութեան Գործընկեր